

ՆԱԽԱՌԱՋԱՄԱՅՅԱՆ

ՏԵՍԻԼԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Տեսիլի առաջացման ժամանակը դժվար է որոշել: Այն հնագույն ծագում ունի և մշտապես ուղեկցել է մարդուն նրա ծնված օրվանից, դեռ այն ժամանակվանից, երբ բնության սերտ մաս կազմող մարդը ի զորու չեր տարբերել օբյեկտիվ իրականության մեջ կատարվող դեպքերը իր մտապատկերում ձևավորվածներից: Տեսիլներ կան գրեթե բոլոր կանոնակարգված կրոններում: Հին և նոր Կտակարաններում ևս տեսիլները մեծ թիվ են կազմում, որոնք բնութագրվում են իրենց խորիմաստությամբ և նպատակայնությամբ: Տեսիլները հիմնականում կոչված են կապ հաստատելու Աստծո և մարդու միջև: Շատ հաճախ այդ կապը լինում է միջնորդավորված, և միջնորդի՝ գերագույն էության խոսնակի դեր են կատարում գլխավորապես հրեշտակները կամ սրբերը:

Միայն Հին Կտակարանի վաղ շրջանի և նոր Կտակարանի որոշ հատվածներում կարելի է հանդիպել տեսիլների, որ մահկանացուներին հայտնվում է ինքը՝ Աստված: Հետագայում արդեն մարդու և Աստծու անմիջական կապը աստիճանաբար վերածվում է միջնորդավորվածի: Այս առումով կարելի է հիշել արևելյան հրաշալի մի առակ, որ աշակերտը հարցնում է ուսուցչին. «Հնում եղել են մարդիկ, ովքեր տեսել են Աստծուն. ինչո՞ւ այժմ նման մարդիկ չկան», և ուսուցիչը տալիս է հետևյալ պատասխանը. «Որովհետև այժմ չկա մարդ, որ կարողանա այդքան ցած խոնարհվել»: Այսինքն՝ փոխվել է մարդը. մեծացել է նրա եսասիրությունը, և մարդն այլևս վայր չի խոնարհվում, որ վեր ելնի:

Տեսիլները մեծ դեր ու նշանակություն ունեն պատմական դեմքերի, դեպքերի ու իրադարձությունների հետագա զարգացումն ընկալելու, ինչպես նաև դրանց առավել ճշգրիտ լուսաբանման ու մեկնաբանման հարցերում:

Աստվածաշնչյան տեսիլները բոլոր ժամանակներում մեկնաբանվել և շարունակվում են մեկնաբանվել տարբեր մեկնիչների կողմից: Առավելապես մեծ ուշադրության են արժանացել Եսայի, Զաքարիա, Դանիել, Հովհան, Եգեկիել և մյուս մարգարենների տեսիլները: Մեկնությունների թվով առաջնությունը պատկանում է Եգեկիելի առաջին տեսիլին, որ պատկերված է Աստվածության չորեքերպյան աթոռը:

Եգեկի Կողբացին իր «Եղծ աղանդոց» նշանավոր գործում սահմանում է տեսիլը՝ այն հստակ տարբերակելով սովորական երազից՝ բացատրելով, որ «Երազներն ել զանազան պատճառներ ունեն: Դեպք է լինում, երբ մարդ ցերեկը մի բան է մտքով անցկացնում, նույն բանով միտքն զբաղվում է նաև մարմնի հանգստանալու ժամանակ, քնի մեջ, իսկ դեպք էլ է լինում, երբ (այդ) բանի մասին բնավ մտածած չի լինում, բայց երազում տեսնում է: Եվ դա երկու պատճառ ունի:

Կամ Աստծու շնորհների ազդեցությամբ որևէ հաստատուն բան տեսնում են որպես հայելու մեջ, օրինակով և ոչ թե բացահայտ ճշմարտությամբ. (դա լինում է) մարդուն լավ բաների մղելու համար. ինչպես Հովհանին ու Դանիելին մեծամեծ երևույթների տեսիլներ

երևացին:

Կա՞մ էլ (լինում է) հակառակորդից (դևից). քանի որ այն անմարմին է, ինչպես որ մարդու շունչն է անմարմին, ուստի զանազան կերպարանքներ է պատկերում (մարդու աչքի) առջև. մերթ՝ կանանց (կերպարանքներ)՝ ցանկություն գրգռելու համար, մերթ՝ ահոնելի զարդների ու սողունների՝ զարհութեցնելու համար. ինչպես Հոբն է ասում, թե՝ «Երազներով զարհութեցնում ես ինձ»¹: Կողբացին հստակեցնում է, որ նախօրոք մտածմոնքի առարկա չդարձած երազներն են, որ ունեն վերոհիշյալ երկու՝ գերբնական պատճառները, իսկ մնացած դեպքերում դրանք (երազները) տարբեր դեպքերից ու իրադարձություններից իսկ մնացած դեպքերում դրանք (երազները) տարբեր դեպքերից ու իրադարձություններից իսկ մնացած դեպքերի արդյունք են: Եզնիկը տեսիլ է համարում այն երազը, որն Աստվածային շնորհների հետևանք է. այսինքն՝ տեսիլը նույն երազն է, միայն այդ երկուսի պատճառներն են տարբեր:

Տեսիլները գիտական ուսումնասիրությունների առարկա են դարձել միայն XIX դարի վերջերից, երբ սկսեցին բուռն կերպով զարգանալ ֆիզիոլոգիան և հոգեբանությունը: Իհարկե, եթե այս դիտանկյունից քննելու լինենք տեսիլ երևութը, ապա պետք է նշել, որ «երազները հոգեկան բավականին բարդ պրոցեսներ են, որոնք իրագործվում են քնած մարդու հիշողության մեջ կուտակված մտապատկերների օգնությամբ»²: Սակայն դրանք մինչև վերջ ուսումնասիրված չեն: Գրեթե նույնը պնդում էր և Կողբացին: Այլ խնդիր է, թե երազների ատաղձը կազմող այդ մտապատկերներն ինչպես են կուտակվում մարդու հիշողության մեջ:

Ընդհանրապես երազների մեկնաբանման, դրանց պատճառների բացահայտման գործում զգալի դեր ունի մարդու հոգեկան ոլորտի գիտակցական և անգիտակցական մակարդակների փոխհարաբերության խնդիրը: Իսկ այս խնդիրը փիլիսոփայության և հոգեվերլուծության մեջ վաղուց գոյություն ունի: Դեռևս յոզայի ուսմունքում ընդգծվում է, որ գիտակից բանականությունից բացի գոյություն ունի նաև հոգեպես ավելի ակտիվ անգիտակցականի բնագավառը: Անգիտակցականի խնդրին անդրադարձել են Պլատոնն իր երկխոսություններում (Կրիտոն, Պրոտագորաս, Գորգիոս և ուրիշներ), Արիստոտելը «Հոգու մասին» տրակտատում, Շելլինգը «Տրանսցենդենտալ իդեալիզմի համակարգը» աշխատության մեջ և ուրիշներ:

Աստվածաշնյան և Սուրբ Գրքի կանոնին մաս կազմող անվավեր գրոց մեջ տեղ գտած տեսիլների հիման վրա և նմանությամբ ստեղծվել են բազմաթիվ տեսիլներ ընդհանուր քրիստոնեական և հայ գրականության մեջ: Նման տեսիլները կառուցվածքային առումով կարելի է բաժանել հետևյալ մասերի՝ նախադրություն, երբ նկարագրվում են այն պայմանները, հասունացող գործընթացները, որոնք նախապայման են հանդիսանում տեսիլին, բուռ տեսիլը և դրա նկարագրությունը, մեկնաբանություն և վերջաբան: Սակայն այս բոլոր բաղադրամասերի առկայությունը պարտադիր կանոն չէ: Երբեմն կարող է չլինել այս կամ այն մասը, ավելի հաճախ՝ նախադրությունը:

Տեսիլը սովորական մարդու սովորական տեսնելու արդյունքը չէ: Նախ տեսանողը

* Հմմբ. Յոր, Է 14:

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994, Լ. 145:

² Ա. Նալչաջյան, Վնձն իր երազներում, Երևան, 1982, Լ. 11:

պետք է անպայման ինչոր կերպ առանձնացված լինի մնացած մահկանացուներից: Տեսիլ հայտնվում է միայն այն մարդկանց, ում հետ կապված է որևէ որոշակի նպատակի իրականացում: Նրան, ում հայտնվում է տեսիլը, սովորաբար անվանում են տեսանող: Աստվածաշնչում տեսանող են համարվել հրեա մարգարեներից ոմանք, իսկ հայ մատենագրության, հատկապես բանաստեղծության մեջ՝ Գրիգոր Լուսավորիչը³: Հաճախ չի նշվել նույնիսկ վերջինիս անունը և միայն Տեսանող մակդիրը բավական է եղել հասկանալու համար, թե խորը ում մասին է: Տեսանող ունենում է բոլորովին այլ զգացողություններ, քան առօրյա կյանքում: Տեսիլից ստացած տպավորությունը անհնար է ամբողջությամբ ներկայացնել, քանի որ այն կրում է խիստ սուրբեկտիվ, անհատական բնույթ, և ամեն տեսանող միայն ինքը կարող է պատկերացնել այն զգացողություններն ու ապրումները, որ ունեցել է այդ ընթացքում:

Որևէ վերերկրային տեսարան տեսնելու կամ երկնքից հնչող ձայն լսելու համար անհրաժեշտ է նախապայման: Նախ առկա է մտահոգությունը որևէ հարցի վերաբերյալ, որը կարող է և չգիտակցվել որպես այդպիսին: Տեսլատեսության համար կարևոր նախապայման է լարված վիճակը, զերիուզումը: Տեսիլներ կարող են առաջ բերել նաև հալլուցինածին միջոցները: Այս մասին մանրամասն խոսում է ամերիկյան ժամանակակից հեղինակ Կառլոս Կաստանելան⁴, որն իր՝ հնդկացիների ուսմունքների մասին գրած տարբեր գրքերում նկարագրել է իրեն հայտնված տեսիլները: Դրանցից որոշները իրոք սարսափեցրել են իրեն, սակայն նայանպես Կաստանելան խորապես համոզված է, որ տեսիլները հնարավորություն են տալիս տեսնել ու գիտակցել մարդու սահմանափակությունը և, միաժամանակ, նրան շրջապատող իրերի դրությունը՝ նրանց անշափելիությունն ու անսահմանությունը: Տեսանողը մեկ աստիճանով վեր է կանգնում իրականությունից՝ դիտելու այդ նույն իրականությունը: Վերջին հաշվով պարզ է դառնում, որ բոլոր իրերը հավասար են, և ոչ մեկն առավելություն չունի մյուսի նկատմամբ. այստեղ առանձնանում է մարդը՝ միայն իրեն հատուկ հարաբերությունների աշխարհով, որը խիստ տարբերվում է վերզգայական աշխարհից: Իսկ մարդու կողմից դիտվող երկնայինը թվում է միանգամայն կատարյալ, բոլորի սիրուն արժանի: Ահա հենց այստեղ է կարևորվում տեսիլի դերը:

Ընդ որում տեսանելու համար ամենին էլ պարտադիր չէ տեսողություն, կարելի է «տեսանել» նաև լսողությամբ, քանի որ այստեղ գլխավոր դերը վերապահվում է մտապատկերներին: Տեսլատեսության առիթ կարող են հանդիսանալ երբեմն նույնիսկ խիստ պարզունակ առարկաներ. քարի ստվերը, առվով հոսող ջուրը և այլն:

Քրիստոնեական գրականության մեջ ևս քիչ չեն դեպքերը, երբ տեսիլները սարսափեցնում են տեսնողներին. այդ մասին ասում է նաև Եզնիկը՝ օրինակ բերելով Հոքին: Որքան

³ Փ. ՄԱՅԹԻՒԹՅԱՆ, Ասլվածաշնչի և Հայոց սուրբ անվանց բառարան (բար V-XX դարերի հայ բանագիրների մասին), Երևան, 2001 թ., Տեսանող, հողված:

⁴ Կառլոս Կաստանելա (իրականության ավելի մոտ են այս թվականները՝ 1925-1998) - XX դարի խոշորագույն միստիկ և պոետ, որի կենսագրությունը խիստ մշուշով է: Նա իր մասին ոչինչ չի հայտնել, խուսափել է հարցագրույցներից, լուսանկարվելուց և առավել ևս՝ նկարահանվելուց: Իր գրքերում հետազոտողի վեսանկյունից պատկերել է կախարդական աշխարհը և կոչ արել հաղթել չարին ու երկրի վրա հասպատել ճշմարտության թագավորություն:

Էլ սարսափելի լիճի տեսիլը՝ որպես այնկողմնայինի հետ շփում, այնուամենայնիվ, այն արտասովոր ձգողական ուժով է օժտված. դա բացատրվում է նրանով, որ սուբյեկտը ընտրյալ է, նա տարբեր է մյուս մասնականացուներից, նա մի քայլ առաջ է նրանցից: Այստեղ աստվածայինն ու սարսափելին միաձովվում են՝ ստեղծելով հետաքրքիր մի երևոյթ, որի հատկանիշներն են անորոշությունը, խորհրդավորությունը, անհայտությունը (իսկ անհայտությունը միշտ էլ սարսափեցնող է), ինչը հատուկ է աստվածայինի ապրումներին: Մինչդեռ մարդը համոզված է, որ աստվածության դրսնորման երկու ձևերից՝ պատժից ու ողորմածությունից գերակշռում է վերջինը: Ուստի նա իրեն սարսափեցնող տեսիլների միջոցով նոյնիսկ ցանկանում է արտահայտել իր իղձերը՝ կապված տեսիլի օբյեկտի հետ:

Իրենց աշխարհագրական և ժամանակային ընդգրկումով տեսիլները տարբեր են: Կան տեսիլներ, որոնք վերաբերում են միայն մեկ երկու, մեկ հասարակության, ունեն, այսպես կոչված, տեղային բնույթ ու նշանակություն՝ կոնկրետ որևէ դեպքի, դեմքի, իրադարձության մասին տեղեկացում, հաղորդում, ուղղորդում կամ էլ նախազգուշացում: Մյուս կարգի տեսիլներն են ունեն առավել լայն ընդգրկում թե՛ ժամանակային, թե՛ տարածության առումով: Սրանք վերաբերում են ոչ միայն այդ մեկ, այլև հարևան երկրներին, երբեմն էլ՝ ողջ աշխարհին, քանի որ շատ հաճախ աշխարհաբարական դրսնորումներով է պայմանավորվում տվյալ երկրի վիճակը: Այս բնորոշումը լիովին համապատասխանում է միջնադարյան Հայաստանում տարածված տեսիլներին:

Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Ազաթանգեղոսը, Եզնիկ Կողբացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, Ղևոնդը, Արիստակես Լաստիվերտցին, Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ իրենց երկերում այս կամ այն կերպ անդրադարձել են տարբեր տեսիլների:

Տարբեր կարգի տեսիլների օրինակներ գտնում ենք Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմություն» երկում: Նա մեջբերում է Ստեփանոս Սյունեցու թարգմանած Սուլը Մեթոնիոսի տեսիլը⁵՝ գրված Եզնիկելի տեսիլի հիման վրա և նմանությամբ, որին նախորդում են Սյունեցու կյանքի ու գործունեության պատկերումը, ուր ևս առկա են տեսիլներ: Բացի այս, Օրբելյանի մոտ կան տեղային այլ տեսիլներ, որոնք վերաբերում են Հայաստանի՝ մասնավորապես Սյունիքի եկեղեցիներին և եկեղեցական հայրերին:

Սյունետային գիծն առկա է բոլոր տեսիլներում, սակայն երբեմն այն կարող է ընդհանվել կամ լինել նվազ կարևոր, քանզի առավելապես ուշադրություն է դարձվում թողած ազդեցությանը, քան ձևին ու բովանդակությանը:

Վերոհիշյալ տեսիլներում առկա են գործող անձինք: Սակայն գրականության մեջ շատ կան տեսիլներ, ուր չկան գործող անձինք, կան միայն գործողություններ: Այստեղ պատկերվում են միայն հրաշալի երևոյթներ, որոնք անվանվում են պարզապես հրաշըներ: Դրանք կարող են լինել որևէ նրե գնդի երևալը, լուսավորության, լույսի սյան հայտնվելը, քամու կամ մրրկի անսպասելի սկսվելն ու ավարտվելը, այսինքն՝ բնության տարբեր երեւույթներ, որոնք միանշանակորեն ընդունվում են որպես վերին բանականության գոյության դրսնորում: Տագնապալից ժամանակներում երկրի ընդերքում տեղի ունեցող երևոյթ-

⁵ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունը Ա. Ա. Արրահամյանի, Երևան, 1986, լ. 156:

Աերը, լուսատումների շարժումները կապվում էին հայ ժողովրդի քաղաքական բախտի մեջ կատարվող շրջափոխումների հետ: Արեգակի կամ լուսնի խավարումը նովճակն համարվում էր նշան, որ ուղարկված էր երկնքից՝ որպես նախազգուշացում մարդկանց, ովքեր ոչ աստվածահան կյանք էին վարուն:

Մատթեոս Ուռիայեցին արեգակի խավարումը համարում է սատանայի ազատումը կապանքներից. «Այժմ սատանան արձակվեց իր կապանքներից՝ համաձայն Հովհաննես ավետարանչի տեսիլքի⁶ վկայության, ինչպես նրան Աստծո հրեշտակն ասաց, թէ հազար տարի սատանան կապված պիտի մնա և իր կապանքներից նորից պիտի արձակվի: Այսօր ահա սատանան արձակվեց իր հազարամյա կապանքներից. հայոց տոմարի 478 թվականն է, դրա վրա գումարիր 552, լինում է 1030 տարի, դրանից հանիր [Քրիստոսի] նախարան մկրտվելու երեսուն տարին, կատացվի, որ մինչև օրս անցել է հազար տարի: Այդ պատճառով էլ ահա երկինքը պատռվեց»⁶:

Հայ գրականության մեջ, բացի պատմագրական երկերից, տեսիլների կամ տեսիլներից կատարված վկայակոչումների հանդիպում ենք նաև քնարական ստեղծագործությունների մեջ: Տասներեքերրորդ դարի մեծանուն բանաստեղծ Կոստանդին Երզնկացին իր տաղերից մեկում, որում նա պատասխան է տալիս իրեն չարախտողներին ու նախանձողներին, Ակարագրում է մի տեսիլ, որի միջոցով ինքը երկնային շնորհ է ստանում բանաստեղծելու՝ առանց վարդապետների մոտ աշակերտելու: «...Ա'յլ է աշխատիլն եւ ա'յլ շնորհըն ի հոգւոյն...», - հավաստիացնում է բանաստեղծը⁷: Ներսես Շնորհալին էլ իր նշանավոր Ողբում առանց մատնանշելու կոնկրետ տեսիլը, Ակարագրում է խաչակիր «մեծատանց գնդերի» դաժան պատերազմը, որով հաստատվելու է երազած խաղաղությունը⁸: Նա այստեղ հենվում է Ներսես Մեծի տեսիլում նկարագրված գուշակությունների վրա:

Ավելի ուշ Եղիշե Զարենցն իր «Աթիլլա» բանաստեղծությունում Աթիլլայի տեսլային երազի իրականացումն է նկարագրում գրելով.

Մոռացել էին արքա Աթիլլին:

Եվ հեզնում էին երազը նրա...

Եվ կարծում էին, որ մեռել է նա...

Իսկ ես - բարձրացել, անցնում եմ կրկին⁹:

Կամ «Մահվան տեսիլ» վերնագրված հայտնի բանաստեղծությունը, ուր մահը հայտնը վում է «մի գորշ պարանի ու երկնուղեց երկու փայտերի» պատկերով, իսկ ինքը տեսիլի նման է մոտ գնալու այդ կախաղանին, սակայն կախվածի աչքերում երևալու է մեկ այլ տեսիլ՝ լուսապսակ ապազայի տեսիլը: Զարենցն ունի շարք, որ կոչվում է «Տեսիլաժամեր», ուր ներառված բանաստեղծություններում տեսլային խոհեր են՝ իրականի ու անիրականի

⁶ Հայութություն, Խ 2:

⁷ Մատթեոս Ուռիայեցի, ժամանակագրություն, թարգմանությունը, Անրածությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1973, Խ 35: Ըստհանրապես ցանկացած խոշոր աղևսոք միջնադարում համարվում էր աշխարհի կապարածի նախազգուշացում:

⁸ Կոստանդին Երզնկացի, Լոյս առաօպուն, Խազմեց, ծանոթագրեց Լ. Մկրտչյանը, Երևան, 1981 թ., Խ 60:

⁹ Եղիշե Զարենց, Երկեր, Երևան, 1983, Խ 133:

սահմանագծին կատարվող: Անմարմին ու լուսե տեսիլն ուղեկցում է նրան ամենուր՝ և երեկոյան զանգերի երգում, և անմարդ բոլվարում, և դաշտերի մենակության մեջ, և խավար սենյակում, և, իհարկե, հայրենիքում:

Վահան Տերյանի «Տիրություն»¹⁰ բանաստեղծությունում հանդիպում ենք տիրության խորհրդանշանային պատկերի, որը հանդես է զալիս ճերմակագետս ուրուի տեսլային պատկերով:

Լևոն Շանթը «Հին աստվածներ» դրամայում ցանկանալով ցուց տալ իր հերոսի՝ երիտասարդ աբեղայի հոգեկան տվայտանքները՝ դիմում է տեսիլի օգնությանը, որը հայտնը վում է ճակատագրական պահին: «Միզանման քողով» պատված Սեղան՝ աբեղայի «մտքերի թագուհին», հայտնվում է տեսիլի միջոցով և դիմում երազների օգնությանը, որոնք իշելով՝ իրենց հետ հուս են բերելու և հավատ: Տեսլային Սեղան հորդորում է աբեղային. «Ալ մի՛ ըլլար տիտոր»¹¹: Այսինքն՝ տեսիլը նաև միջոց է՝ դուրս գալու դժվարին ու անելանելի թվացող իրավիճակից:

Տեսիլների կամ երազների միջոցով իրենց ստեղծագործություններին միս ու արյուն են տվել ոչ միայն գրական աշխարհի ներկայացուցիչները: Որպես գեղարվեստական մտածողության ցայտուն դրվորում տեսիլները, որոնք պատկերում են գեղարվեստական ստեղծագործության էռլեյունը, առկա են արվեստի տարբեր բնագավառների գործերում: Կոմպոզիտորներից շատերը իրենց տեսիլ-երազներում լսել են երաժշտություն, ապա ձայնահշերով արտահայտել (Բեթհովեն, Շուման, Ռիմսկի-Կորսակով):

Երազային և հալյուգինացիոն պատկերների ու մտահղացումների ազդեցության տակ նկարիչները կերտել են իրենց կտավները (Ռաֆայել, Գոյա, Դալի)¹²: Հաճախ բանաստեղծները, ինչպես նաև այլ ստեղծագործողներ, արթուն ժամանակ հայտնվում են այնպիսի հոգեվիճակում, որոնք հոգեբանական բոլոր չափանիշներով նման են երազային տեսլայինի: Սրանք արթմնի երազներն են, անուրջները, որոնք ել տեսիլի տարատեսակներ են: Մեկ գաղափարի վրա կենտրոնացած անձանց մոտ մտածական ու հոգևոր գործնթացները տեսիլային երազներում տալիս են իմացական նոր արդյունք¹³:

Այս հոգեվիճակներում շատ գրողներներ ստեղծել են իրենց գործերը: Լոնգֆելլոն իր առակներից որոշները ստեղծել են երազում, Վոլտերի, Պուշկինի մի շարք բանաստեղծություններ երազի արդյունք են և այլն:

Արտասահմանյան գրականության մեջ ևս բազում են տեսիլների, աստվածային

¹⁰ Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1972, էջ, 25:

¹¹ Լևոն Շանթ, Երկեր, Երևան, 1989, էջ 385:

¹² Ս. Դավիթ ունի մի շարք ստեղծագործություններ, որոնց անուններն ու բնույթը որոշակիորեն մարմնանշում են դրանց նյութի երազներից վերցված լինելը: 1932 թ. կերպված «Երազ» նկարը, որը առաջին պլանում կենց խոշոր գլուխ է: պարկերված, իսկ հետին պլանում մարդկային մերկ մարմիններ, ասկածի լավագույն ապացույցներից է: Տեսիլսյին մրածելակերպը զերիրապաշտությանը (սյուրուալիզմին) հարուկ մրածելածներից է:

¹³ Հաճախաղեալ է նաև զիգության դարբեր ճյուղերում զյուգերի դեսլային արադը (Հայ մաքենագրության մեջ գրերի զյուգը համարվում է դեսիլի արդյունք, երբ ասկվածային Աջն է զծագրում դատերը, իսկ Մաշտոցը՝ միայն արտապարկերում դրանք): Նոյնիսկ բնագիրության մեջ կան նման երևոյթներ. ազգությամբ սերը զյուգարար Ն. Տեսլայի (1856-1943) էլեկտրապեխնիկայի և ռադիոտեխնիկայի բնագավառներում կարարած զյուգերում իրենց դերն ունեն դեսիլները:

երազների կամ պարզապես երազների նկարագրություններ:

Հերման Հեսսեն¹⁴ իր ստեղծագործություններից մեկում ունի այսպիսի տողեր, որը նկարագրում է բանաստեղծության տեսլային հայտնությունը. «Մի անգամ՝ գիշերը, երբ արթը մնի պառկած էի, հանկարծ իմ մեջ արթնացավ բանաստեղծությունը, այնքան գեղեցիկ և այնքան հրաշալի բանաստեղծություններ, որ մտքովս չանցավ անգամ դրանք գրի առնել, իսկ առավոտյան այլևս չեի հիշում, քանզի պարփակված էի իմ մեջ, ինչպես ծանր ընկույզը՝ դյուրաբեկ կեղեւի մեջ: Մեկ ուրիշ անգամ նա երևաց, երբ ընթերցում էի մի բանաստեղծի, խորհրդածում Դեկարտի, Պասկալի դատողությունների շուրջ, մեկ այլ անգամ երևաց կրկին և ինձ ուկեղեն ճանապարհով տարավ դեպի երկինք, երբ ինձ հետ էր իմ սիրելին»¹⁵:

Անտիկ գրականության մեջ ևս կարելի է հանդիպել մարգարեական երազների նկարագրության՝ Հոմերոսի «Իլիականում», Վերգիլիոսի «Էնեականում»¹⁶: Հետագա դարերի գրականության մեջ ևս հանդիպում ենք նման երևույթների. Դանթեն իր երազներում հանդիպում էր Բեատրիչեն և սոնետներում երգում նրան:

Ա. Ս. Պուշկինի՝ Աննա Կերսին նվիրված հայտնի բանաստեղծությունում ներոսութիւն հայտնվում է որպես վաղանցիկ տեսիլ.

Այն ակնթարթն եմ հիշում ես պայծառ,
Երբ երևացիր հրաշքի պես,
Տեսիլքի նման դու ինձ տեսլացար,
Որպես գեղեցիկ հանճարը կեզ:

(թարգմ. Ռ. Պավոյան)¹⁷

Я помню чудное мгновенье:
Передо мной явилась ты,
Как мимолетное виденье,
Как гений чистой красоты¹⁸.

Գրականության մեջ լայնորեն օգտագործվել է երազների կամ տեսիլների օգնությամբ կերպարների հոգեկան աշխարհը բացահայտելու գրական-հոգեբանական հնարանքը: Պուշկինն իր լայնակտավ գործերում, ինչպիսիք են «Եվգենի Օնեգինը», «Բորիս Գոդունովը», «Կապիտանի աղջիկը», նկարագրում է երազներ, որոնք ոչ միայն ինքնանպատակ չեն, այլև լավագույն միջոց են՝ ամբողջական պատկերացում տալու այն հոգեվիճակների մասին, որոնց մեջ հայտնվել են ներոսները՝ Տատյանան, Գրինյովը, Գոդունովը: Որպես առանձին սյուժե ունեցող փոքրիկ պատումներ՝ երազ-տեսիլները միաժամանակ մաս են կազմում այուժետային ընդհանուր գծերի:

Երազի, տեսիլի կարևորությունը հատկապես շեշտված է Ն. Չեռնիշևսկու «Ի՞նչ անել» ծրագրային վեպում, որում հեղինակի հիմնական գաղափարները դրսևորվում են գլխավոր

¹⁴ Հերման Հեսս (1877-1962) - XX դարի գրականության ամենախնագիր դեմքերից մեկը: Նրա գործերը, որոնք պարկանում են գրական գրեթե բոլոր հիմնական ժանրերին, խորապես ինքնակենսագրական են, իսկ արձակը՝ խիստ բազմաչերք ու դարրեր ուղղությունների ու մտածողությունների կնիքն իր վրա կրող:

¹⁵ Հերման Հեսս, Տափառքանի գայլը, Երևան, 2003, էջ 29:

¹⁶ Ըստ հանրապես հին հույնների և հոռմնացինների մոտ սովորություն կար զեալ և քննի աստվածների դամարներում, որպեսզի աստվածները երազներում այցի զան ու օգնեն իրենց:

¹⁷ Ա. Ս. Պուշկին, Ըստիր Երկեր, Երևան, 1985, էջ 147:

¹⁸ А. С. Пушкин, Полное собрание сочинений, т. 2, ст. 238.

հերոսութուն Վերա Պավլովնայի չորս երազների մեջ:

Իր գործերում երազներին մեծապես անդրադարձել է Լ. Տոլստոյը: «Պատերազմ և խաղաղություն» վեպում հեղինակը նկարագրում և բացատրում է հերոսների՝ Պիեռ Բեզուխովի, Անդրեյ Բալկոնակու երազները, որանց պատճառները: Նույնը կարելի է տեսնել նաև «Անա Կարենինա» վեպում, որը պատկերված են գլխավոր հերոսութուն երազները:

Ն. Վ. Գոգոլը «Շինելը» պատմվածքում խոսում է մի տեսիլի մասին, որը աստիճանավորի տեսքով մի մեռել հայտնվում էր շինելավոր մարդկանց և պոկում նրանց շինելները՝ կարծես վրեժ լուծելով իր իսկ շինելի համար, որն այդպես էլ չհասցրեց վայելել:

Որուս գրականության հսկաներից մեկը՝ Ֆ. Դոստոևսկին, նկարագրում է բարդ մի ֆոգեկիճակ. Կարամազով եղբայրներից մեկին՝ Իվանին, հայտնված տեսիլի գլխավոր հերոսը սատանան է, որին միայն հոգեկան ծայրահեղ լարված դրության մեջ գտնվող Իվանն է տեսնում: Այս տեսիլը հիանալի հնարավորություն է տվել հեղինակին՝ ցույց տալու, թե ինչպես արտաքնապես հավասարակշված թվացող անձը կարող է ներքուստ բոլորովին էլ այդպիսին չլինել, այլ ունենալ հոգեկան խիստ փիրուն կերտվածք: Դոստոևսկին այս կերպարի միջոցով նաև ցույց է տվել հոգեբանական մեկ այլ երևոյթ՝ անձի երկվածությունը:

Այստեղ անպայման պետք է հիշել Շեքսպիրի հայտնի ողբերգության մեջ պատկերված տեսիլը՝ իոր ուրվականի հայտնությունը որդում՝ Համլետին, որը ամբողջ որդերգության համար հենք է ծառայում և առաջմղիչ ուժ: Արքայազն Համլետի հետագա գործողությունները պայմանավորված են հենց այդ տեսիլով, որի միջոցով ճշմարտությունն է հայտնի դառնում: Տեսիլների նկարագրություններում, ինչպիսիք են Կ. Համսունը, Ռ. Մուգիլը, Օ. Հարսլին, Է. Բըրջեսը և ուրիշներ: Գեղարվեստական ստեղծագործության վրա տեսիլ-երազների ունեցած ազդեցությունների հարցով լրջորեն ու հետևողականորեն զբաղվել են և գերիրապաշտները¹⁹:

Տարբեր հեղինակների երկերում պատկերված տեսիլները հոգեկան գործունեության, մտածական տարբեր գործընթացների շնորհիվ առաջացած գեղարվեստական ինքնույն պատումներ են, որոնք կոչված են լրացնելու, գեղարվեստորեն համեմելու գործող անձանց ու նկարագրված դեպքերի ու իրադարձությունների նկարագրությունները:

¹⁹ Roger Fayolle, La critique, Paris, 1978, p. 173-174.